



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Դեկտեմբեր 2005

Ներկայացվում են 2005 թվականի դեկտեմբերի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները: ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվար-հոկտեմբեր ամիսներին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ նոյեմբերին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-հոկտեմբերի ցուցանիշներ			
Իրական հատված							
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	739.6	874.4	1,106.7	564.1	667.2	839.4	1,154.0
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.2	14.0	10.1	11.9	15.7	9.7	12.2
Արդյունաբերության աճ (%)	13.9	15.6	2.1	15.1	22.1	1.7	5.9
Գյուղատնտեսության աճ (%)	3.8	4.2	14.5	3.2	0.7	13.8	10.4
Շինարարության աճ (%)	41.5	45.5	13.4	41.5	53.4	13.0	31.5
Տրանսպորտ և կապի աճ (%)	-1.7	8.3	16.9	5.5	7.6	17.2	12.0
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	19.7	14.1	10.5	14.8	14.3	8.8	9.0
Ծառայությունների աճ (%)	12.0	8.6	12.1	3.8	7.2	13.2	10.3
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	0.7	4.6	6.0	1.3	4.0	6.8	3.9
Սպառողական գների ինդեքս (d/2 միջին, %)	1.1	4.7	7.0	1.0	4.1	7.7	0.8
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)							
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	185.4	212.2	250.1	147.0	166.0	198.4	238.0
Ծախսեր (մլրդ դրամ)	235.8	242.0	295.9	181.7	195.2	232.2	300.4
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	7.8	-8.1	-2.0	-1.6	-3.3	6.0	-11.2
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.6	13.1	13.2	14.2	13.3	13.6	14.0
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	17.3	14.9	15.6	17.5	15.7	15.9	17.7
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.6	0.5	0.1	0.2	0.3	0.4	0.7
Արտաքին հատված							
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	505.2	685.6	715.0	407.8	573.0	574.5	766.4
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	987.2	1,279.5	1,351.0	774.8	1,047.4	1,077.0	1,393.2
Անևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-482.0	-593.9	-635.9	-367.0	-474.4	-502.5	-626.8
Արտահանման աճ (%)	47.8	35.7	4.3	51.2	40.5	0.3	33.4
Ներմուծման աճ (%)	12.5	29.6	5.6	9.2	35.2	2.8	29.4
Անևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	20.3	21.2	17.9	20.2	22.1	18.6	16.9
Դրամավարկային հատված							
Փողի զանգված (d/2 վերջ, մլրդ դրամ)	203.1	233.8	285.9	182.6	210.2	257.6	338.0
ՀՀ ԿԲ շուկա արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	123.7	157.8	168.9	103.3	138.1	148.2	225.3
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.7	6.9	6.6	5.7	5.9	5.7	5.0
Փողի բազմարկիչ	2.0	2.1	2.2	2.0	2.1	2.2	1.9

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտաբյուջային և սպառողական շուկաներ

	2002	2003	2004	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն
	տարեկան ցուցանիշներ			2005-ի ամսական ցուցանիշներ								
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)												
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	3.9	3.7	4.9	-	-	3.2	3.8	3.9	3.7
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	4.6	5.3	4.9	5.7	5.3	5.1	-	-	5.1
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0	18.0	18.0	17.0	17.0	16.0	16.0
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	19.1	16.6	18.9	18.0	18.4	18.4	17.7	18.3	17.4
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	5.9	5.8	5.6	6.1	6.0	6.2	6.5	5.8	5.4
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	-1.6	-3.9	0.3	-0.1	-1.4	4.1	-1.4	-1.1	2.0
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (d/2 վերջ)	584.9	566.0	485.8	458.1	439.3	445.1	442.3	447.7	468.3	444.2	451.2	449.4
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (d/2 վերջ)	606.9	702.2	661.1	593.0	566.9	555.1	533.2	541.7	570.5	535.9	547.7	529.9
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (d/2 վերջ)	18.3	19.2	17.5	16.5	15.8	15.8	15.4	15.6	16.4	15.6	15.9	15.6
Սպառողական գների ինդեքս (d/2 վերջ, %)	2.0	8.6	2.0	-0.9	-0.9	0.1	-1.4	-4.5	-1.4	0.9	0.1	1.1
Պարենային ապրանքներ*	1.2	6.1	9.9	-1.4	-1.3	0.0	-2.1	-6.4	-2.2	0.9	0.0	1.5
Ոչ պարենային ապրանքներ	0.2	1.9	0.6	-0.4	-0.2	-0.3	-0.1	-0.2	0.4	1.7	0.6	0.5
Ծառայություններ	1.1	1.9	1.5	0.6	0.1	1.0	0.4	-0.2	0.4	0.5	0.1	0.2

* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:
Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Հիմնական միտումները

Իրական հատված

2005 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների դրությամբ տնտեսական աճը կազմեց 12.2 տոկոս՝ 2.5 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի արդյունքները: Միևնույն ժամանակ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելացավ 315 ԱՄՆ դոլարով, ընդ որում միայն հոկտեմբերի ընթացքում մոտ 178 ԱՄՆ դոլարով:

Տնտեսական աճին առավել նպաստեցին շինարարության և գյուղատնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի աճերը, համապատասխանաբար, 31.5 և 10.4 տոկոսով: Արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՆԱ-ի կառուցվածքում տեղի ունեցան որոշ տեղաշարժեր, որոնցից առավել հիշարժան են շինարարության ճյուղի կշռի՝ 5.7 տոկոսային կետով ավելացումը և գյուղատնտեսության կշռի 3.6 տոկոսային կետով նվազումը: Հիշյալ տեղաշարժերի արդյունքում ՀՆԱ-ի 20.6 տոկոսը ձևավորվեց շինարարության ճյուղում ստեղծված ավելված արժեքի հաշվին: Նվազագույն աճը՝ 5.9 տոկոս, արդյունաբերության ճյուղում էր, որն ապահովում է երկրի ՀՆԱ-ի 20.3 տոկոսը:

Բյուջետային հատված

2005 թվականի առաջին ինն ամիսների կատարման արդյունքներով պետբյուջեի եկամուտների աճն առաջանցիկ էր ծախսերի նկատմամբ: Այնուամենայնիվ, ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերը 1.2 տոկոսային կետով գերազանցեցին եկամուտների մակարդակը, որի արդյունքում ինն ամսվա դրությամբ գրանցվեց 17.4 միլիարդ դրամի պակասուրդ:

Եկամուտների 21.5 տոկոս աճը հիմնականում պայմանավորել են ԱԱՀ-ի՝ 18.6 տոկոսով, ոչ հարկային եկամուտների՝ 2.5 անգամ և շահութահարկից ստացվող մուտքերի՝ 57.7 տոկոսով աճերը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել են պաշտոնական տրանսֆերտները՝ մոտ 40 տոկոսով կամ 2.6 միլիարդ դրամով, ինչպես նաև կապիտալ գործառնություններից եկամուտները՝ 9.4 տոկոսով: Հարկային եկամուտների 19.7 տոկոսով աճը զսպել են ակցիզային և պարզեցված հարկերից մուտքերի կրճատումները, համապատասխանաբար, 5.7 և 2.1 տոկոսով: Ընդ որում եթե ակցիզային հարկից մուտքերի անկումը շարունակվում է 2005-ի փետրվարից, ապա պարզեցված հարկից մուտքերի նվազումը, այդ հարկի կիրառման ամբողջ պատմության ընթացքում, տեղի ունեցավ առաջին անգամ:

2005-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով ծախսերի հիմնական ուղղություն հանդիսացան կրթության և գիտության, ընդհանուր նշանակության պետական ծառայությունները (խմբեր 01-03), ինչպես նաև սոցիալական ապահովագրության և ապահովության ոլորտները: Միևնույն ժամանակ մոտ 3.5 անգամ կրճատվել են վարելիքաէներգետիկ համալիրին հատկացումները: Գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսության, ձկնաբուծության ոլորտներում կատարված ծախսերը 18.9 տոկոսով զիջում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշին:

ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների համաձայն 2005 թվականի հունվար-հոկտեմբերին պետական բյուջեի եկամուտները 21.4 տոկոսով, իսկ ծախսերը 29.3 տոկոսով գերազանցեցին նախորդ տարվա մակարդակը, որոնց պարագայում ձևավորվեց 11.2 միլիարդ դրամի պակասուրդ: Հարկային եկամուտների կառուցվածքում շարունակվում են նախորդ ամսվա միտումները. պարզեցված հարկից մուտքերի նվազումը կազմեց 4.6 տոկոս: Ծախսերի կառուցվածքում հուշագրավ է արտաքին պարտքի դիմաց տոկոսավճարների 13.5 տոկոսով աճը, որոնք 2004 թվականի մարտից ունեին նվազման միտում:

Արտաքին առևտուր

2005 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին արտահանման աճը 4 տոկոսային կետով առաջանցիկ էր ներմուծման աճի նկատմամբ, այնուամենայնիվ, առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի խորացումը շարունակվեց և նախորդ տարվա համապատասխան 10 ամիսների դրությամբ ավելացավ 124.3 միլիոն ԱՄՆ դոլարով կամ 29.4 տոկոսով:

Առանց մարդասիրական օգնության առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն կազմեց 597.6 միլիոն ԱՄՆ դոլար, որի պարագայում նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ դեֆիցիտի խորացումը կազմեց 25.5 տոկոս:

2005-ի 10 ամիսների դրությամբ մարդասիրական օգնության կարգով Հայաստան ներմուծվեցին 29.2 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով ապրանքներ, որոնց կազմում շուրջ 40 տոկոսը բաժին ընկավ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքին, 15.1 տոկոս կազմեցին սարքերը և ապարատները, 15 տոկոս՝ մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները, 11.4 տոկոս՝ մանածագործական իրերը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մարդասիրական օգնության ծավալների 3 տոկոսով նվազումը հիմնականում պայմանավորվեց ԱՄՆ-ից և Իտալիայից ուղղվող միջոցների, համապատասխանաբար, 16.4 և 89.2 տոկոսով նվազմամբ: Միևնույն ժամանակ մոտ 4.5 անգամ ավելացան Շվեյցարիայից, ինչպես նաև Ճապոնիայից տրամադրված մարդասիրական օգնության ծավալները:

Դրամավարկային հատված

Փողի զանգվածը հոկտեմբերի վերջին՝ սեպտեմբերի համեմատ ավելացավ 1.7 տոկոսով, ընդ որում արտարժույթով ավանդների 1.7 տոկոսով կրճատմանը զուգընթաց տեղի ունեցավ դրամով ավանդների 4.3 տոկոսով աճը:

Նախորդ տարվա համեմատ հոկտեմբերի վերջին փողի զանգվածը ավելացավ մոտ մեկ երրորդով. գրեթե կրկնապատկվեց շրջանառության մեջ կանխիկը, շուրջ 70 տոկոսով ավելացան դրամով ավանդները: Արտարժույթով ավանդների աճի տեմպերի դանդաղման արդյունքում (9.6 տոկոս), վերջիններիս կշիռը ընդհանուր փողի զանգվածում նվազեց 8.4 տոկոսային կետով և կազմեց 41.5 տոկոս:

Արտարժույթային փոխարժեքներ

Ընդհանուր առմամբ նոյեմբերի առաջին երեք շաբաթների ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքն արժեզրկվեց հիմնական արտարժույթների նկատմամբ: Հետագայում տեղի ունեցած կտրուկ արժեքավորման հետևանքով նոյեմբերի վերջի դրությամբ դրամի փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմեց 449.4 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 529.9 դրամ, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 15.6 դրամ՝ 2004-ի դեկտեմբերի համեմատ արժեքավորվելով, համապատասխանաբար, 7.5, 19.8 և 10.7 տոկոսով:

Նոյեմբերի ընթացքում դրամի փոխարժեքի տատանումները հիմնական արտարժույթների գծով միջինում կազմեցին 3.5 տոկոս: Առավել մեծ՝ 19.1 դրամ տատանումով աչքի ընկավ եվրոյի նկատմամբ դրամի փոխարժեքը, որը մեկ շաբաթվա ընթացքում նոյեմբեր ամսվա առավելագույն ցուցանիշից՝ 549.0 դրամ մեկ եվրոյի դիմաց հասավ իր նվազագույն ցուցանիշին՝ 529.9 դրամ: ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի շուրջ 3.5 շաբաթ տևած հետևողական արժեզրկման արդյունքում նոյեմբերի միջին փոխարժեքը մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ նախորդ ամսվա միջին փոխարժեքի համեմատ արժեզրկվեց շուրջ 2 տոկոսով:

Սպառողական շուկա

2005 թվականի նոյեմբերին սպառողական շուկայում տեղի ունեցավ 1.1 տոկոս գնաճ: Հատկապես բարձր էր պարենային ապրանքների գների աճը՝ 1.5 տոկոս: Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գնաճը կազմեց, համապատասխանաբար, 0.5 և 0.2 տոկոս: Այնուամենայնիվ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գները 2.4 տոկոսով նվազեցին, իսկ հունվար-նոյեմբեր ամիսների միջին գնաճը կազմեց 0.7 տոկոս:

2005 թվականի հունվար-հոկտեմբերին ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմեց 3.9 տոկոս: Գնալով նվազում է արդյունաբերության դեֆլյատորը, որը 10 ամիսների դրությամբ կազմեց 9.2 տոկոս: Նախորդ տարվա նկատմամբ առավել բարձր էր շինարարության դեֆլյատորը՝ 22.8 տոկոս, որը ցաբերում է աճի միտում: Միևնույն ժամանակ գյուղատնտեսության դեֆլյատորը 10.6 տոկոսով զիջեց նախորդ տարվա մակարդակը:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

վիճակագրորդ դրամ, ըստ փաստացի կատարման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-սեպտեմբերի ցուցանիշներ			
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	228.3	292.0	302.2	159.6	201.9	213.5	259.4
Ընդամենը եկամուտներ	211.3	241.6	288.5	152.1	168.6	206.5	254.9
Ընթացիկ եկամուտներ	209.5	238.3	279.4	150.9	166.0	198.8	247.9
Հարկային եկամուտներ, այդ թվում	185.4	212.2	250.1	132.0	148.0	176.3	211.0
Ավելացված արժեքի հարկ	95.0	107.8	117.9	67.6	76.3	82.8	98.2
Շահութահարկ	17.4	17.6	32.0	13.0	11.5	21.8	34.3
Եկամտահարկ	12.5	16.8	20.4	8.4	11.5	14.6	18.2
Ակցիզային հարկ	35.3	39.1	40.7	25.3	27.9	29.8	28.1
Պետական տուրք	13.2	15.2	16.9	9.8	11.7	12.9	13.0
Ոչ հարկային եկամուտներ	10.9	10.9	12.4	9.2	6.3	9.6	24.0
Կապիտալ եկամուտներ	1.8	3.2	9.1	1.1	2.6	7.8	7.0
Պաշտոնական տրանսֆերտներ	17.0	50.5	13.7	7.5	33.3	7.0	4.4
Պետբյուջեի ծախսեր	263.9	312.7	334.0	175.2	218.2	230.5	276.8
Պաշտպանություն	36.8	44.3	52.3	28.4	32.7	39.2	48.0
Հասարակական կարգի պահպանություն	16.2	20.8	24.6	11.0	13.9	15.9	21.9
Կրթություն և գիտություն	29.1	34.8	47.4	18.3	23.4	30.6	41.0
Առողջապահություն	16.0	19.6	24.7	8.4	13.1	15.4	19.6
Սոց. ապահովագրություն և ապահովություն	23.8	29.3	35.0	19.8	20.1	25.2	31.3
Ընթացիկ ծախսեր	219.4	222.3	262.8	na	156.0	184.8	216.3
Աշխատավարձ	20.6	13.7	24.2	na	7.9	16.0	21.6
Տոկոսավճարներ	15.7	11.4	9.8	na	10.8	14.1	11.7
Սուբսիդիաներ	8.2	14.5	18.1	na	4.8	3.5	3.1
Ընթացիկ տրանսֆերտներ	47.3	41.8	50.1	na	29.6	35.9	50.7
Ապրանքներ և ծառայություններ	127.5	140.9	160.5	na	98.6	111.2	125.4
Կապիտալ ծախսեր	34.2	83.8	60.6	na	55.3	37.5	50.6
Վարկավորում հանած մարում	10.3	6.6	10.5	na	6.9	8.2	9.9
Դեֆիցիտի ֆինանսավորում	35.6	20.7	31.7	15.6	16.4	17.0	17.4

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՉՆԱԿի նկատմամբ, ըստ փաստացի կատարման

	2002	2003	2004	2002	2003	2004	2005
	տարեկան ցուցանիշներ			հունվար-սեպտեմբերի ցուցանիշներ			
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.6	13.1	13.2	15.0	14.1	14.2	14.6
Ավելացված արժեքի հարկ	7.0	6.6	6.2	7.7	7.2	6.7	6.8
Շահութահարկ	1.3	1.1	1.7	1.5	1.1	1.7	2.4
Եկամտահարկ	0.9	1.0	1.1	1.0	1.1	1.2	1.3
Ակցիզային հարկ	2.6	2.4	2.1	2.9	2.7	2.4	2.0
Պաշտոնական տրանսֆերտներ	1.2	3.1	0.7	0.9	3.2	0.6	0.3
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	19.4	19.2	17.6	19.9	20.7	18.5	19.2
Պաշտպանություն	2.7	2.7	2.8	3.2	3.1	3.2	3.3
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.3	1.3	1.2	1.3	1.3	1.5
Կրթություն և գիտություն	2.1	2.1	2.5	2.1	2.2	2.5	2.8
Առողջապահություն	1.2	1.2	1.3	1.0	1.2	1.2	1.4
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.7	1.8	1.8	2.3	1.9	2.0	2.2
Դեֆիցիտի ֆինանսավորում	2.6	1.3	1.7	1.8	1.6	1.4	1.2

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ: